

## **«Բնապահպանություն և բնօգտագործում» առկա և հեռակա բակալավրիատի կրթական ծրագիր**

### ***Ընդհանուր տեղեկություն***

«Բնապահպանություն և բնօգտագործում» բակալավրական կրթական ծրագիրը նպատակաուղղված է շրջակա միջավայրի պահպանության ոլորտում գործնական կարողությունների ձևավորմանը: Ծրագրի նպատակներ են.

1. բարձրագույն կրթության բակալավրական համակարգում շրջակա միջավայրի պահպանության ուղղությամբ որակյալ մասնագետների պատրաստում,
2. կրթական գործընթացի և մասնագետների պատրաստման որակական ցուցանիշների համապատասխանեցում եվրոպական ստանդարտներին և համընդհանուր կրթական չափանիշներին,
3. նպաստել ինտեգրմանը եվրոպական կրթական համակարգին «Բնապահպանություն և բնօգտագործում» ուղղությամբ նոր սերնդի մասնագետների պատրաստման գործընթացին:

Շրջանավարտին շնորհվում է «Շրջակա միջավայրի բակալավր» որակավորում: Ծրագիրը մշակվել է բնապահպանության ոլորտի մասնագետների ակտիվ մասնակցությամբ և միտված է ոլորտի լավագույն փորձի ներդաշնակեցմանը:

Մասնագիտական դասընթացներին զուգահեռ ուսանողը համապատասխան փորձառություն պետք է անցնի բնապահպանության ոլորտի կառավարման օղակներում և ձեռնարկություններում, որի ընթացքում հնարավորություն կստանա գործնականում կիրառել ստացված տեսական գիտելիքները և հմտությունները:

Ծրագրի շրջանակներում որպես դասախոսներ ներգրավվում են բնապահպանության ոլորտի (բնապահպանության, էկոլոգիայի, լանդշաֆտագիտության, էկոլոգիական իրավունքի, ագրոբիզնեսի, էներգետիկայի, բնապահպանական հաշվառման, ապահովագրության և աուդիտի, շրջակա միջավայրի կառավարման և վերահսկողության, էկոլոգիական մոնիթորինգի և նորմավորման, բնապահպանական և սոցիալական ռիսկերի կառավարման, ժամանակակից բնապահպանական տեղեկատվական տեխնոլոգիաների /GIS/, ընդերքօգտագործման և ԱՃԹՆ, ջրային ռեսուրսների, հողային ռեսուրսների, անտառային ռեսուրսների, կենսաբազմազանության, կլիմայի փոփոխության, կայուն զարգացման) լավագույն մասնագետները և փորձագետները: Ակնկալվում է նաև միջազգային հայտնի կազմակերպություններից հրավիրյալ դասախոսների ներգրավում, ինչպես նաև՝ ուսանողների մասնակցություն ոլորտի բազմաբնույթ միջոցառումներին, այդ թվում տեղական և միջազգային բնապահպանական

Ֆորումերին: 2020-2021 ուսումնական տարուց սկսած ուսումնառության ժամանակ ուսանողները հնարավորություն կունենան օգտվել ՀՊՏՀ-ում առկա GIS լաբորատորիայից, բացի ՀՊՏՀ ենթակառուցվածքներից, կօգտագործվեն նաև շրջակա միջավայրի նախարարության և կից կառույցների ռեսուրսները:

Մասնագիտական դասընթացներին զուգահեռ ուսանողը համապատասխան փորձառություն պետք է անցնի բնապահպանության ոլորտի կառավարման օղակներում և ձեռնարկություններում, որի ընթացքում հնարավորություն կստանա գործնականում կիրառել ստացված տեսական գիտելիքները և հմտությունները:

### ***Մասնագիտության նկարագիրը***

«Բնապահպանություն և բնօգտագործում» կրթական ծրագիրը կողմնորոշված է պատրաստել համապատասխան գիտելիքներով, կարողություններով և հմտություններով օժտված մասնագետների, որոնք

- կարող են լուծել տեղական, ազգային, տարածաշրջանային և գլոբալ մակարդակներում շրջակա միջավայրի պահպանության և բնօգտագործման խնդիրները,
- կկարողանան մշակել և իրականացնել կայուն զարգացմանը համահունչ ազգային բնապահպանական քաղաքականություն,
- կհիմնավորեն շրջակա միջավայրի պահպանության ոլորտում ազգային գործողությունների առաջնահերթությունները,
- կիրականացնեն բնական ռեսուրսների և էկոհամակարգային ծառայությունների և շրջակա միջավայրին հասցված վնասի գնահատում,
- կիրականացնեն ազգային անվտանգության համակարգում էկոլոգիական անվտանգության ուղղությունները,
- կիրականացնեն շրջակա միջավայրի որակի և բնօգտագործման արդյունավետ կառավարում,
- կնպաստեն հասարակության էկոլոգիական գիտակցության բարձրացմանը և էկոլոգիական կրթության սկզբունքների տարածմանը:

Դասընթացները ներառում են շրջակա միջավայրի պահպանության հետևյալ հիմնական ուղղությունները՝

1. Բնապահպանության և բնօգտագործման համընդհանուր ոլորտին վերաբերող գիտելիքների, կարողությունների և հմտությունների ձևավորում և զրգացում կիրառում հավասարակշռված էկոլոգատնտեսական որոշումների ընդունման գործընթացներում,
2. Հատուկ մասնագիտական գիտելիքների ստացում, որոնք անհրաժեշտ են պրակտիկ գործունեության ծավալման համար՝ շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման, պետական էկոլոգիական փորձաքննության, էկոլոգիական նորմավորման, բնապահպանության և բնօգտագործման

- տնտեսական մեխանիզմի գործիքակազմի կատարելագործման, էկոլոգիական անվտանգության ապահովման ոլորտներում,
3. Շրջակա միջավայրի պահպանության և բնօգտագործման կառավարման, էկոլոգատնտեսական մոնիթորինգի տվյալների հավաքագրման, համակարգման, վերլուծության և գնահատման սկզբունքների և մեթոդաբանության յուրացում և օգտագործում կանխատեսումային համալիր ուսումնասիրություններում, ինչպես նաև շրջակա միջավայրի պահպանության ու բնօգտագործման ազգային ծրագրերի ու ռազմավարությունների մշակման գործընթացներում,
  4. Ժամանակակից համակարգչային և շրջակա միջավայրի պահպանության ու բնօգտագործման կառավարման և հսկողության փորձագիտատեղեկատվական համակարգերի ձևավորման և գործնական կիրառման տեսական հիմքերի ու մեթոդաբանության իմացություն, կարողությունների ու հմտությունների ընդլայնում,
  5. Շրջակա միջավայրի պահպանության և բնօգտագործման ազգային հիմնախնդիրների իմացություն, դրանց էկոլոգատնտեսական կարգավորման ու տնտեսական զարգացման էկոլոգիացման քաղաքականության իրականացման հմտությունների/կարողությունների ձեռք բերում,
  6. Համաշխարհային տնտեսական զարգացման ժամանակակից մոդելների իմացություն, համակարգչային մոդելավորման գիտելիքների ձևավորում և դրանց տեղայնացման մեթոդաբանության կիրառման կարողությունների հզորացում:

### ***Աշխատանքի հնարավորություններ***

Շրջանավարտները կարող են զբաղեցնել պետական կառավարման մարմինների, ներկայացուցչությունների, փոքր և մեծ կազմակերպությունների մասնագիտացված ստորաբաժանումների ղեկավար պաշտոններ, աշխատել որպես կենսաբանական և գյուղատնտեսական գիտությունների բնագավառների մասնագետներ, կրթության բնագավառի մասնագետներ, հասարակական և հարակից գիտությունների/ տնտեսագետներ/ բնագավառների մասնագետներ, բնապահպանության և բնօգտագործման ոլորտի փորձագետներ, տեսուչներ և որակի հսկիչներ /անվտանգության և առողջապահության բնագավառի տեսուչներ և որակի հսկիչներ/, բնական գիտությունների և առողջապահության բնագավառների մասնագետներ /գյուղատնտեսության և անտառային տնտեսության խորհրդատուներ/, շրջակա միջավայրի մոնիթորինգի օպերատորներ, մարզային ինքնակառավարման մարմինների փորձագետներ և տեսուչներ, բնակարանային-կոմունալ կազմակերպությունների աշխատողներ: